

5.3. 2011 թվականի մայիս ամսվա հիդրոտեքնոլոգիայի պայմանները Հայաստանում

Ըստ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հիդրոտեքնոլոգիայի և մոնիթորինգի պետական ծառայության տեղեկատվության, մայիսին օդի միջին ամսական ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում եղել է նորմային մոտ, Արարատյան դաշտավայրում՝ նորմայից ցածր 0.5-0.8 աստիճանով:

Միջին տասնօրյակային ջերմաստիճանն առաջին և երկրորդ տասնօրյակներում եղել է նորմայից ցածր 0.5-1.5 աստիճանով, երրորդում՝ նորմայից փոքր ինչ բարձր:

Միջին առավելագույն ջերմաստիճանը Սյունիքի հովիտներում և Արարատյան դաշտավայրում կազմել է +22 +26°C, ՀՀ Տավուշի մարզում՝ +19 +21°C, ՀՀ Լոռու մարզում՝ +16 +18°C, Սյունիքի նախալեռներում՝ +17 +22°C, լեռնային շրջաններում՝ +19 +24°C:

Ամենաբարձր ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում դիտվել է մայիսի 31-ին: Սյունիքի հովիտներում և Արարատյան դաշտավայրում գրանցվել է +27 +31°C, Արագածոտնի նախալեռներում՝ +27 +29°C, Սյունիքի նախալեռներում, ՀՀ Տավուշի և Լոռու մարզերում՝ +18 +23°C, լեռնային շրջաններում՝ +14 +18°C:

Միջին նվազագույն ջերմաստիճանը լեռնային շրջաններում կազմել է +3 +6°C, ՀՀ Լոռու մարզում՝ +4 +8°C, ՀՀ Տավուշի մարզում՝ +7 +11°C, Սյունիքի նախալեռներում՝ +6 +9°C, Սյունիքի հովիտներում՝ +11 +14°C, Արարատյան դաշտավայրում՝ +10 +12°C:

Ամենացածր ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում դիտվել է մայիսի 9-10-ին: Լեռնային շրջաններում և ՀՀ Լոռու մարզում գրանցվել է -2 +3°C, ՀՀ Տավուշի մարզում՝ +2 +7°C, Սյունիքի նախալեռներում և Արարատյան դաշտավայրում՝ +5 +8°C, Սյունիքի հովիտներում +10 +11°C:

Ամսական տեղումների քանակը տարածաշրջանների զգալի մասում եղել է նորմայից բարձր: Արարատյան դաշտավայրում այն կազմել է նորմայի 113-210%-ը, Արագածոտնի նախալեռներում՝ 150-175%, ՀՀ Լոռու մարզում՝ 109-160%, ՀՀ Տավուշի մարզում՝ 103-121%, ՀՀ Շիրակի և Գեղարքունիքի մարզերում՝ 96-175%, Սյունիքի հովիտներում՝ 90-134%, Սյունիքի նախալեռներում՝ 76-101%:

Մայիսի 1-ին ամենուրեք, 2-ի գիշերը, 6-ին, 8-ին, 19-ին, 21-23-ին, 26-27-ին և 29-ին տարածաշրջանների զգալի մասում, 3-5-ին, 7-ին, 9-16-ին, 20-ին, 24-25-ին, 28-ին և 30-ին առանձին տարածաշրջաններում դիտվել է անձրև և ամպրոպ:

Մայիսի 16-20-ին ՀՀ Լոռու մարզում դիտվել է մառախուղ 200-500 մ տեսանելիությամբ: Մայիսի 5-13-ին և 21-ին տեղ-տեղ դիտվել է քամու ուժգնացում, արագությունը՝ 10-17 մ/վրկ, պոռթկումները՝ 16 -28 մ/վրկ: Մայիսի 5-9-ին, 13-19-ին և 21-23-ին տեղ-տեղ դիտվել է կարկուտ 1-2 սմ տրամագծով:

Չյան ծածկույթի բարձրությունը մայիսի 31-ի դրությամբ պահպանվել է միայն 2800 մ-ից բարձր տարածքներում և Արագած բարձր լեռնային կայանում (3229 մ) այն կազմել է 210 սմ:

Հանրապետության գետերի մեծ մասում միջին ամսական ելքերը կազմել են նորմաների 110-180%-ը: Տեղացած հորդառատ անձրևներից և ձնհալքից վտանգավոր ելքեր են դիտվել Արփա և Եղեգիս գետերում (մայիսի 2-ին և 21-ին), Փամբակ գետում (մայիսի 6-ին): Մայիսի 13-ին Ագատի ջրամբարը լցվել է 100%:

Սևանա լճի մակարդակը մայիս ամսվա ընթացքում բարձրացել է 21 սմ-ով և մայիսի 31-ի դրությամբ կազմել 1900.36 մ, որը 2010թ. նույն օրվա համեմատ բարձր է 26 սմ-ով: